4055

IX
Б-98

1936

25 OCT 2010

ՀՍԽՀ Լուսավորության Ժողովրդական Կոմիսարիատ

# ԾՐԱԳԻՐ ՅԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ

V—VI ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

78
Ծ-98

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ — 1936

ՀՍԽՀ-ССРА
Мясникян

25 OCT 2010
4055
15 MAY 2010

Պատ. խմբագիրներ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ, Մ. ՄԻՐԶՈՅԱՆ, Դ. ՂԱԶԱՐՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Գ. ԶԵՆՅԱՆ
Սրբագրիչ՝ Ա. ԱՐԶԱՔԱՆՅԱՆ

Հրատարակ. 3696, Գլավ. լիտգոր – Վ. 1147 Պատվ. 915, Տիրաժ 3000
Հանձնված է արտադրության 15 հուլիսի 1936 թ.
Ստորագրված է տպագրելու 11 օգոստոսի 1936 թ.

Պետհրատի տպարան, Յերևան, II Գնունի, № 4

78
ծ-98
40182

## ԲԱՑԱՏՐԱԿԱՆ

Հիմք ընդունելով դպրոցներում յերգեցողության–յերաժշտության գծով կատարված աշխատանքների յերկամյա փորձը, 1933 թվի ծրագրում մի շարք փոփոխություններ են կատարվել:

Յերաժշտական թեմաներն անցնելիս գլխավոր խնդիրն է՝ աշակերտներին ծանոթացնել տվյալ յերաժշտագետի այն ստեղծագործություններին, վորոնք պարզ կերպով կարող են բնորոշել նրա ստեղծագործությունների՝ աշակերտներին ըմբռնելի գծերը:

Աշակերտների ծանոթությունը տվյալ յերաժշտագետի յերաժշտական յերկերին, նրա կյանքին, ստեղծագործություններին և ապրած դարաշրջանին—հնարավորություն կտա պատկերացում ունենալու նրա ստեղծագործության վոճային մի քանի առանձնահատկությունների մասին:

**Խմբական յերգեցողության** վրա այս ծրագրում մեծ ուշադրություն է դարձվում, նկատի ունենալով, վոր այդ համարվում է այն հիմնական աշխատանքը, վորով աշակերտներն ակտիվ մասնակցություն են ցույց տալիս յերաժշտական արվեստին վորպես կատարողներ և վորով նրանք ամենից լավ ու ամենից շատ կարող են դրսևորել իրենց ստեղծագործական ընդունակությունները: Այս ծրագրում խմբային ունակություններն ավելի սիստեմատիկ և մանրամասն են տրվում, քան նախորդ ծրագրում: Այստեղ հիմնականն այն է, վոր յերգելու ժամանակ դըրսևորվի յերգի բովանդակությունը և վոճային առանձնահատկություններին համապատասխանող բնույթը:

Խմբական յերգեցողության աշխատանքներն ավելի բազմազան դարձնելու համար նյութեր են տրվում նաև թեմայից դուրս. այսպիսով կբավարարվեն նաև յերեխաների ցանկություններն ու պահանջները:

**Ունկնդրության** բաժնում ծրագրով հնարավորություն է ըստեղծված յերեխաներին ծանոթացնելու իրենց տարիքին համա–

պատասխան յերաժշտական նյութերին և դրա հիման վրա տարրական գաղափար կազմելու տվյալ յերաժշտագետի ստեղծագործության ամենավառ և բնորոշ առանձնահատկությունների մասին:

Յերաժշտական (նոտային) գրագիտությունն ավարտվում է 6-րդ դասարանում: Այս բաժնից աշակերտությանը տրվում է այնքան, վոր նրանք կարողանան նոտաներով յերգել յեղանակի և ռիթմի տեսակետից վոչ բարդ յերգեր:

Խմբական յերգեցողությանը տրվում է ժամանակի 50 տոկոսը, ունկնդրությանը և նոտային գրագիտությանը՝ 20-ական տոկոս, իսկ զրույցներին՝ 10 տոկոս:

Դաշնամուր չունեցող դպրոցներում ծրագրային աշխատանքները հիմնականում կատարվում են յերգեցողության և յերաժշտական գրագիտության շուրջը: Այս դեպքում անհրաժեշտ է ծրագրից ընտրել այնպիսի յերկեր, վորոնք չեն աղճատվի առանց նվագակցության (ժողովրդական յերգեր, մեներգներ և այլն): Յերաժշտագետի դաշնամուրային կամ որկեստրային կատարում պահանջող յերկերին ծանոթացնելու համար պետք է օգտագործել արտադպրոցական ժամերը: Այսպիսի դպրոցներում դիրեկցիան պետք է միջոցներ ձեռք առնի կազմակերպելու աշակերտների ռադիոունկնդրության և համերգներ հաճախելու աշխատանքները: Այնտեղ, ուր հնարավոր չէ այս աշխատանքները կազմակերպել, դպրոցը պետք է ձեռք բերի պատեֆոն և համապատասխան պլաստինկաներ: Պատեֆոնն անհրաժեշտ է նաև այն դպրոցներում, վորտեղ դաշնամուր կա: Պատեֆոնը, ընտրած համապատասխան պլաստինկաներով, հնարավորություն կտա ունկնդրության միջոցով ավելի մոտիկից ծանոթանալ օպերաներին, սիմֆոնիկ գրականությանը, ինչպես և որկեստրային ու տարբեր գործիքներով կատարած յերաժշտական ստեղծագործություններին:

Դպրոցին կից պետք է կազմակերպել յերաժշտական կաբինետ, վորտեղ և պիտի տեղի ունենան յերաժշտական աշխատանքները: Կաբինետը պետք է ունենա սարքին դաշնամուր, նոտային գրատախտակ, պատեֆոն և համապատասխան պլաստինկաներ, յերաժշտական գրականություն ու պարագաներ: Կաբինետը պիտի զարդարված լինի յերաժշտագետների նկարներով:

Դպրոցը պետք է ունենա իր բազմաձայն յերգեցիկ խումբը,



վորին մասնակցում են միջնակարգ դպրոցի բոլոր դասարաններից ընտրված յերգիչ-յերգչուհիները: Խմբական աշխատանքներին հատկացվում են հատուկ ժամեր: Յերգեցիկ խումբն ունենալու յե իր աշխատանքների պլանը և ռեպերտուարը:

## Ձեռնարկներ աշակերտների համար

Յուրաքանչյուր աշակերտ պետք է ունենա տետրակ և նոտային գրագիտության դասագիրք:

## Ձեռնարկներ ուսուցչի համար

1. „Хрестоматия для слушания музыки в политехнической школе“—для средней школы.
2. „Сборник песень для средней школы.“
3. „Сборник песень для хоровых кружков“.
4. Римский-Корсаков.— “Летопись моей музыкальной жизни“.
5. Хубов, Бородин, М. П. Мусоргский.—Статьи и материалы“, под редакцией Келдыша и Яковлева.
6. Келдыш—„Мусоргский“.
7. Дамс. „Шуберт“.
8. Кулаковский.—„Теория музыки“.

Այս բոլոր ձեռնարկները կարելի յե ձեռք բերել հետևյալ հասցեյով՝ Москва, Неглинный 14, МОГИЗ, „Ноты почтой“.

9. Խորհրդային մեծ և փոքր հանրագիտարանների ( БСЭ և МСЭ ) հոդվածները Շուբերտի, Գրիգի, Բեթհովենի, Գլինկայի, «Հզոր խմբակի» (Могучая кучка), Մուսորգսկու, Բորոդինի, Չայկովսկու և մյուսների մասին:
10. Ա. Տեր-Ղևոնդյան—Յերաժշտության էլեմենտար թեորիա (կա նաև ռուսերենը):
11. Կարա-Մուրզա—Հայ ժողովրդական յերգեր
12. Գրիգոր-Սյունի—Հայ ժողովրդական յերգեր
13. Կոմիտաս—Մեներգներ Ա., Խմբերգներ Բ, Մեներգներ
14. Ռ. Թերլեմեզյան—Կոմիտաս (ժողովածու)
15. Ն. Տիգրանյան — Հայկական պարեր
16. Ս. Բարխուդարյան — Արևելյան պարեր

17. Ստ. Մելիքյան — Ուրվագիծ հայ յերաժշտության պատմության:

Հայերեն գրականությունը կարելի յե ձեռք բերել հետևյալ հասցեյով. Յերևան, Հայպետհրատ կամ՝ Эривань, Армгиз.

Պատրաստ ե և շուտով լույս կտեսնի «Դպրոցական յերգերի ժողովածու», ուր ամփոփված են տարրական և միջնակարգ դպրոցների ծրագրերով նախատեսված յերգերը:



# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ (41 ժամ)*

## Ա Ռ Ա Ջ Ի Ն Թ Ե Մ Ա.— ՊԱՅՔԱՐԻ ՅԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՅԵՐԳԵՐ (11 ժամ)

### ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ա) Հին ռուսական և արևմտա-յեվրոպական հեղափոխական յերգեր:

բ) Կառուցման, մասսայական, պիոներական և կոմյերիտական յերգեր՝ խորհրդային յերաժշտագետների ստեղծագործություններից:

### ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Աշակերտներին ծանոթացնել հին հեղափոխական յերգերին և նրանց ծագմանը: Ծանոթացնել արդի այն յերգերին, վորոնք պայքարի և շինարարության հերոսականությունն են արտացոլում: Ցույց տալ հին հեղափոխական յերգերի տարբերությունն արդի յերգերից:

### Նյութեր յերգեցողության համար

1. Անվախ ընկեր—հին հեղափոխական
2. Վարշավյանկա — հին հեղափոխական
3. Դեպի մարտ — ռուսական հեղափոխական
4. Կոմինտերն — Եսլերի
5. Այսոր բոսոր — մշակում—Ռ. Մելիքյանի

*) Ուսման պլանով 5-րդ դասարանի յերգեցողության-յերաժշտության դասերին տված է 21 ժամ: Պակաս ժամերը լրացնել մյուս առարկաների չօգտագործված ժամերից:

6. Ջա՛ն, կարմիր մայիս—Մ. Միրզոյանի
7. Խորհրդային Միության հերոսներ—Նովիկովի
8. Արևն ելավ — Ռ. Մելիքյանի
9. Հնչենք զիլ փողեր — Ա. Մանուկյանի
10. Մեր արտերում — Մ. Միրզոյանի

## ՅԵՐԿՐՈՐԴ ԹԵՄԱ.— ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՅԵՐԱԺՇՏԱԳԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ (21 ժամ)

### ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին յենթաթեմա (15 ժամ).—Հայ ժողովրդական յերաժշտական ստեղծագործությունները և նրանց ոգտագործումը յերաժշտագետների կողմից:

Յերկրորդ յենթաթեմա (6 ժամ).—Հարևան ժողովուրդների յերգերը և նրանց ոգտագործումը յերաժշտագետների կողմից:

### ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### Առաջին յենթաթեմա

Աշակերտներին ծանոթացնել հայ ժողովրդական յերգերի բազմազան բովանդակությանը՝ առանձին յերգերի որինակներով:

Առանձին որինակներով ցույց տալ, թե ի՛նչպես է ժողովրդական յերգը գեղարվեստական մշակման յենթարկվել:

Հայ յերաժշտագետների ինքնուրույն գեղարվեստական ստեղծագործությունները ժողովրդական կոլորիտով:

#### Նյութեր յերգեցողության և ունկնդրության համար

1. Վարդ կոճիկս—ժողովրդական, մշակումը Կարա Մուրզայի
2. Գացեք տեսեք—ժողովրդական, մշակումը Կարա Մուրզայի:
3. Քելե՛, քելե՛ — ժողովրդական, մշակումը Կոմիտասի
4. Գնա՛, գնա՛ — » » »



5. Ամպել ա, ձյուն չի գալի— ժողովրդական, մշակումը Կոմիտասի
6. Անձրևն եկավ — ժող., մշ. Կոմիտասի
7. Արի՛, Մանան — ժողովրդական, մշակումը Ռոմ. Մելիքյանի
8. Կոտ ու կես — ժող., մշ. Ռոմ. Մելիքյանի
9. Ա՛յ կաքավիկ — ժող., մշ. Ռոմ. Մելիքյանի
10. Սարեն կուգա — ժող., մշ. Գր.-Սյունու
11. Լուսնակը ցոլաց, գնաց — ժող., մշ. Սպ. Մելիքյանի
12. Ելի յարին — ժող., մշ. Ա. Մանուկյանի
13. Գարնանային — ժող., մշ. Արմ. Տիգրանյանի
14. Ջաղցի դռնով — ժող., մշ. Մ. Աղայանի
15. Ջան գյուլում — ժող., մշ. Մ. Աղայանի

#### Յերկրորդ յենթաթեմա

Աշակերտներին ծանոթացնել հարևան ժողովուրդների յերգերի յերաժշտական բովանդակություններին, նրանց մեղեդիայի, ռիթմի առանձնահատկություններին, և թե ի՛նչպես են այդ ժողովրդական ստեղծագործություններն ոգտագործել յերաժշտագետները:

#### Նյութեր յերգեցողության համար

1. Գյոզարիմ — Թուրքական, մշակում Գ. Միրզոյանի
2. Թուլթու նանա — Թուրքական, մշակում Հաջիբեկովի
3. Ախալի դրոյեբա — վրացական
4. Իավնանա (օրորոցի յերգ)—վրացական, Զ. Պալիաշվիլու
5. Гречаники—русская, Мельникова.
6. А мы просо сеяли—русская народная.

#### Նյութեր յերաժշտության ունկնդրության համար

1. Ե՛յ ուխնեմ — ռուսական ժողովրդական
2. Գոգոնա դա գոգոնա—վրացական, մշակում Զ. Պալիաշվիլու
3. Պիոներ մարշ—Թուրքական, մշակում Ա. Մայիլյանի
4. Վո պոլե բերյոզա ստոյալա— ռուսական-ժողովրդական

Յերրորդ թեմա (9 ժամ)

1. Մոցարտ, Բեթհովեն—5 ժամ
2. Շուբերտ, Գրիգ—4 ժամ

### ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ծանոթություն Մոցարտի, Բեթհովենի, Շուբերտի և Գրիգի առանձին ստեղծագործություններին: Համառոտ կենսագրական տեղեկություններ այդ յերաժշտագետների մասին:

### ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Աշակերտներին ծանոթացնել՝ ա) Մոցարտի ստեղծագործություններին, վորոնցում կլասիկ պարզությամբ արտահայտվել են վոկալ և ինստրումենտալ յերաժշտության խոշոր ձևերը—սիմֆոնիա, սոնատա, օպերա, բ) Բեթհովենի ստեղծագործություններին, վորոնցում վերը հիշված յերաժշտական ձևերը հասել են բարձրագույն կատարելության, գ) Շուբերտի և Գրիգի ստեղծագործություններին, ցույց տալով, թե ինչպես նրանք ժողովրդական ստեղծագործությունները գեղարվեստորեն մշակել են իրենց յերաժշտական մանր ձևերի մեջ:

Նյութեր յերաժշտության ունկնդրության համար

1. Որոր — Մոցարտի
2. Տաճկական մարշ — Մոցարտի
3. Ադնետը — Բեթհովենի
4. Ցերթային — Բեթհովենի
5. Ջաղացում — Շուբերտի
6. Ֆորել — Շուբերտի
7. Գարուն — Գրիգի
8. Նորվեգիական պարեր — Գրիգի
9. Պերգյունտ-սուիտա — Գրիգի

Նյութեր—թեմայի ծրագրից դուրս (յերգելու համար)

1. Ցնկավ գարուն — Ազատ Մանուկյանի
2. Ջան, կարմիր մայիս—Միք. Միրզոյանի:



Ունակություններ և գիտելիքներ յերգեցողության գծով

### 1. ՁԱՅՆԱՅԻՆ (ՎՈԿԱԼ) ԱՇԽԱՏԱՆՔ

ա) Աշխատանք շնչառության վրա

Շնչառություն լեգատոյի («Հովն անուշ»—Դ. Ղազարյանի) և ստակատոյի («Գնա, գնա»—Կոմիտասի) ժամանակ:

բ) Աշխատանք հնչյունի վրա

Աշխատանք՝ յերգելու կանոնավոր կեցվածքի վրա: Բնական, ազատ, առանց ճչալու և լարվածության՝ ձայնի արտաբերում («Քաղհան»—Կոմիտասի): Պատանիների ձայնի կանոնավոր հնչողականության կարգավորում.—առաջին ձայների համար՝ առաջին օկտավի դո-ից մինչև յերկրորդ օկտավի մի բեմոլը, յերկրորդ ձայների համար՝ փոքր օկտավի լյա-ից մինչև առաջին օկտավի սի բեմոլը (թե՛ յերգելիս և թե՛ լրացուցիչ վարժություններ կատարելիս):

Յերգել՝ լեգատո, ստակատո: Յերգել տարբեր տեմպերով—մեղմ (պիանո) և ուժեղ (ֆորտե):

գ) Աշխատանք տեքստի վրա—արտասանություն (դիկցիա)

Աշխատանք պարզ (տարրորոշված) արտասանության վրա: Բառերի պարզ (հստակ) արտասանություն դանդաղ տեմպերի՝ մեղմի (պիանո) և ուժեղի (ֆորտե) ժամանակ:

### 2. ԽՄԲԱԿԱՆ ՀՆՉՈՒՆՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐ

ա) Ինտոնացիա և բարեհնչունություն (ստրոյ)

Ինտերվալների կանոնավոր առողջանություն ինչպես հետևողական մեղոդիկ, այնպես էլ միաժամանակյա հարմոնիկ միավորումներում:

Կանոնավոր առողջանությունը յերկձայն յերգի ժամանակ («Լորիկ»—Ա. Մայիլյանի, «Ծառս տակը կանաչ է» Դ. Ղազարյանի և այլն):

### բ) Անսամբլ

*Ձայների հավասարեցումն ըստ ուժի՝ միաձայն յերգեցողության ժամանակ: Ավելի մշակել յերգերի ռիթմիկ նկարի ճիշտ կատարումը:*

*Անսամբլի մշակումը յերկձայն յերգեցողության ժամանակ: Առաջին և յերկրորդ ձայների միջև (յերկձայն յերգերի ժամանակ) ընդհանուր դինամիկ մակարդակ գտնելը:*

### գ) Խմբական յերգեցողության ունակություններ

*Յերգել առանց նվագակցության («Յեկավ գարուն»—Սպատ Մանուկյանի, «Քաղհան»—Կոմիտասի) յերկձայն յերգեր և կանոնի ձևով շարադրված յերգեր:*

## ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԼԱԴ

*Դիատոնիկ լադի ինտերվալները մինչև* սեկստան *ներառյալ լսողությամբ ճանաչել—գտնել դրանք և յերգել աստիճանական հերթականությամբ: Գտնել օկտավը՝ հաջորդաբար և միաժամանակ հնչելիս և կարողանալ այն գրել ու յերգել: Կարողանալ յերգի մեջ գտնել* տոնիկան: *Կարողանալ ինքնուրույնաբար յերգել մաժոր յեռահնչյունը տոնիկայից:*

## ՄԵՏՐՈ ՌԻԹՄ

*Յերգելիս ըմբռնել յերգածի չափն ու ռիթմը:*

*Կարողանալ* 2/4, 3/4 *և* 4/4 *չափ ունեցող յերգեր ղեկավարել: Գիտենալ հետևյալ տերմինները*—ֆորտե, պիանո, ալեգրո, անդանտե, մոդերատո, լեգատո և ստակատո:

*Գաղափար ունենալ հին ժողովրդական նվագարանների (թառ, սազ, պարկապզուկ, սրինգ, զուռնա), յեվրոպական գործիքների և նրանցից կազմած անսամբլների մասին:*

## ՈՒՍՄԱՆ ՏԱՐԵՎԵՐՋԻ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. *Իմանալ տարվա ընթացքում լսած և սովորած յերկերից առնվազն 10-ի անունը և նրանց հեղինակները:*
2. *Կարողանալ համառոտ կերպով պատմել հին հեղափոխական ժողովրդական յերգերի ծագման մասին և յուրաքանչյուր բաժնից օրինակներ բերել:*



3. *Ուսուցչի՝ վորևէ գործիքով նվագածի 1—2 ֆրազից (հատվածից) իմանալ ամբողջ յերկը:*
4. *Կարողանալ բնորոշել յերկի ընդհանուր բնույթը:*
5. *Իմանալ Մոցարտի, Բեթհովենի, Շուբերտի և Գրիգի համառոտ կենսագրությունները:*
6. *Կարողանալ տարվա մեջ սովորածներից յերգել 5 յերգ անհատորեն (դաշնամուրի նվագակցությամբ) և բոլոր յերգերը՝ խմբովին (առանց նվագակցության)— մաքուր ինտոնացիայով, հստակ դիկցիայով պահպանելով շնչառության տարրական կանոնները և ճիշտ կատարելով յերգի ռիթմը:*
7. *Յերգի մեջ կարողանալ գտնել տոնիկան:*

## Վեցերորդ դասարան *(42 ժամ)*

Առաջին թեմա (11 *ժամ)—ռուսական յերաժշտություն*

1. *Գլինկա* — 3 *ժամ*
2. *«Հզոր խմբակ»* — 4 *ժամ*
3. *Չայկովսկի* — 4 *ժամ*

## ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*Գլինկայի համառոտ կենսագրությունը: Գլինկան իբրև ռուսական ինքնուրույն գեղարվեստական յերաժշտության հիմնադիր:*

*«Հզոր խմբակը» և նրա ներկայացուցիչները — Բալակիրեվ, Բորոդին, Մուսորգսկի և Ռիմսկի-Կորսակով: Խմբակի գործունեությունը և նրա նշանակությունը ռուս յերաժշտական կուլտուրայի զարգացման գործում:*

*Չայկովսկու համառոտ կենսագրությունը: Աշակերտներին ծանոթացնել Չայկովսկու ստեղծագործությունների յերաժշտական բազմատեսակ ձևերին—օպերա, սիմֆոնիա, բալետ, կամերային յերգեր, դաշնամուրային յերկեր, պիեսներ և այլն: Լիրիկան և դրամատիզմը Չայկովսկու մոտ: Ժողովրդական ստեղծագործությունների օգտագործումը Չայկովսկու կողմից:*

### Նյութեր յերաժշտության ունկնդրության համար

1. Жаворонок— *Գլինկայի*
2. Руслан и Людмила— *օպերայից հատվածներ—Գլինկայի*
3. Эй ухнем— *մշակում Բալակիրեվի*

4. «Կնյազ Իգոր» օպերայից հատվածներ—Բորոդինի
5. «Խովանշչինա» օպերայից հատվածներ — Մուսորգսկու
6. «Սնեգուրոչկա» օպերայից հատվածներ— Ռիմսկի-Կորսակովի
7. «Եվգենի Օնեգին» օպերայի նախերգանքը—Չայկովսկու
8. № 6 սիմֆոնիայի առաջին մասը — Չայկովսկու
9. Романс »
10. «Կարապի լիճը» բալետից հատվածներ — Չայկովսկու

Երկրորդ թեմա—Հայ երաժշտություն (31 ժամ)

### ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վոկալ երաժշտություն (գեղարվեստական և դպրոցական)։ Ինստրումենտալ երաժշտություն (դաշնամուրային և անսամբլային)։

### ՎՈԿԱԼ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ) ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

1. Կարա-Մուրզա.— Տալ համառոտ կենսագրությունը և նրա երաժշտական գործունեությունը բնորոշել իբրև հայ ժողովրդական երգն առաջին անգամ մշակողի և բազմաձայն երգեցողության տարածողի նախախորհրդային շրջանում։
   1. Ծառիս տակը մանիշակ
   2. Զինչ ու զինչ
   3. Վարդ կոշիկս
   4. Հոյ Նազան
   5. Լեպո լե լե
2. Կոմիտաս.—Տալ կենսագրությունը և բնորոշել նրան որպես հայ ժողովրդական երգերը հավաքողի և գեղարվեստորեն մշակողի՝ նախախորհրդային շրջանում։
   1. Քաղհան
   2. Անձրևն եկավ
   3. Քելե՛-քելե՛
   4. Կաքավիկ
   5. Գնա՛-գնա՛
   6. Պարեր (դաշնամուրի համար)
3. Ռոմանոս Մելիքյան.—Տալ համառոտ կենսագրությունը և բնորոշել նրան որպես ինքնուրույն գեղարվեստական երաժշտության զարգացման առաջին շրջանի ներկայացուցչի ու իբրև խորհրդային շրջանի գեղարվեստական և մասսայական երգեր ըստեղծագործողի։



   1. Վարդը
   2. Ջուրն ու մանուկը
   3. Ա՛յ, կաքավիկ
4. Գրիգոր-Սյունի.— Բնորոշել նրան որպես խմբական ժողովրդական երգը մշակողի՝ նախախորհրդային շրջանում։
   1. Սարերը ման եմ յեկել
   2. Սարեն կուգա ձիավոր
   3. Սարերի հովին մեռնիմ
5. Սպիրիդոն Մելիքյան.—Երաժշտ. ազգագրագետ և ժողովրդական երգեր մշակող՝ նախախորհրդային և խորհրդային շրջանում։
   1. Բիլլի-բի
   2. Թխկոնդա
6. Կարո Զաքարյան.—Ինքնուրույն գեղարվեստական երգեր մշակող՝ խորհրդային շրջանում։
   1. Հարվածային
   2. Շտուրմ-մարշ

### ՎՈԿԱԼ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ԴՊՐՈՑԱԿԱՆ)

1. Ազատ Մանուկյան.—Տալ կենսագրությունը և բնորոշել նրան որպես դպրոցական երգերի, մանկական օպերաների ու ինքնուրույն գեղարվեստական երգերի հեղինակ՝ նախախորհրդային և խորհրդային շրջաններում։
   1. Ծաղիկների երգը
   2. Եկավ գարուն
   3. Ծիլ ու ծաղիկ
   4. Երկիր իմ վառ
   5. «Զարի վերջը» օպերայից հատվածներ
2. Անտոն Մայիլյան—որպես մանկական և ինքնուրույն գեղարվեստական երաժշտության ներկայացուցիչ։
   1 Լորիկ
   2. Աշուղի երգը «Սաֆա» օպերայից
   3. Յայլի

4. «Կնյազ Իգոր» օպերայից հատվածներ—Բորոդինի

5. «Խովանշչինա» օպերայից հատվածներ — Մուսորգսկու

6. «Սնեգուրոչկա» օպերայից հատվածներ— Ռիմսկի-Կորսակովի

7. «Յեվգենի Օնեգին» օպերայի նախերգանքը—Չայկովսկու

8. № 6 սիմֆոնիայի առաջին մասը — Չայկովսկու

9. Романс »

10. «Կարապի լիճը» բալետից հատվածներ — Չայկովսկու

Յերկրորդ թեմա—Հայ յերաժշտություն (31 ժամ)

### ԹԵՄԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վոկալ յերաժշտություն (գեղարվեստական և դպրոցական)։ Ինստրումենտալ յերաժշտություն (դաշնամուրային և անսամբլային)։

### ՎՈԿԱԼ ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ) ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐ

1. Կարա-Մուրզա.— Տալ համառոտ կենսագրությունը և նրա յերաժշտական գործունեությունը բնորոշել իբրև հայ ժողովրդական յերգն առաջին անգամ մշակողի և բազմաձայն յերգեցողության տարածողի նախախորհրդային շրջանում։

1. Ծառիս տակը մանիշակ
2. Ձինչ ու զինչ
3. Վարդ կոչիկս
4. Հոյ Նազան
5. Լեպո լե լե

2. Կոմիտաս.—Տալ կենսագրությունը և բնորոշել նրան վորպես հայ ժողովրդական յերգերը հավաքողի և գեղարվեստորեն մշակողի՝ նախախորհրդային շրջանում։

1. Քաղհան
2. Անձրևն եկավ
3. Քելե՛-քելե՛
4. Կաքավիկ
5. Գնա՛-գնա՛
6. Պարեր (դաշնամուրի համար)

3. Ռոմանոս Մելիքյան.—Տալ համառոտ կենսագրությունը և բնորոշել նրան վորպես ինքնուրույն գեղարվեստական յերաժշտու-



թյան զարգացման առաջին շրջանի ներկայացուցչի ու իբրև խորհրդային շրջանի գեղարվեստական և մասսայական յերգեր ստեղծագործողի։

1. Վարդը
2. Ջուրն ու մանուկը
3. Ա՛յ, կաքավիկ

4. Գրիգոր-Սյունի.— Բնորոշել նրան վորպես խմբական ժողովրդական յերգը մշակողի՝ նախախորհրդային շրջանում։

1. Սարերը ման եմ յեկել
2. Սարեն կուգա ձիավոր
3. Սարերի հովին մեռնիմ

5. Սպիրիդոն Մելիքյան.—Յերաժշտ. ազգագրագետ և ժողովրդական յերգեր մշակող՝ նախախորհրդային և խորհրդային շրջանում։

1. Բիլի-բի
2. Թխկոնզա

6. Կարո Զաքարյան.—Ինքնուրույն գեղարվեստական յերգեր մշակող՝ խորհրդային շրջանում։

1. Հարվածային
2. Շտուրմ-մարշ

### ՎՈԿԱԼ ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ԴՊՐՈՑԱԿԱՆ)

1. Ազատ Մանուկյան.—Տալ կենսագրությունը և բնորոշել նրան վորպես դպրոցական յերգերի, մանկական օպերաների ու ինքնուրույն գեղարվեստական յերգերի հեղինակ՝ նախախորհրդային և խորհրդային շրջաններում։

1. Ծաղիկների յերգը
2. Յեկավ գարուն
3. Ծիլ ու ծաղիկ
4. Յերկիր իմ վառ
5. «Զարի վերջը» օպերայից հատվածներ

2. Անտոն Մայիլյան—վորպես մանկական և ինքնուրույն գեղարվեստական յերաժշտության ներկայացուցիչ։

1 Լորիկ
2. Աշուղի յերգը «Սաֆա» օպերայից
3. Յայլի

3. Միքայել Միրզոյան.—Դպրոցական յերգեր, մանկական օպերաներ ու ինքնուրույն գեղարվեստական և մասսայական յերգեր մշակող՝ նախախորհրդային և խորհրդային շրջաններում:

1. Ջան, կարմիր մայիս
2. Մեր արտերում
3. Դաշբիններ ենք մենք
4. Վողջո՛ւյն Բագու սովետական

4. Դանիել Ղազարյան.—Դպրոցական յերգեր, մանկական օպերաներ և ինքնուրույն գեղարվեստական ու մասսայական յերգեր մշակող:

1. Ծառիս տակը կանաչ ե
2. Ծիծեռնակին
3. Ջան, խորհրդային գարուն
4. «Հաղթված բաղեն» օպերայից հատվածներ

## ԻՆՍՏՐՈՒՄԵՆՏԱԼ ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (դաշնամուրային) ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐ

1. Նիկողայոս Տիգրանյան.— Տալ կենսագրությունը և բնորոշել նրան վորպես արևելյան փարսական յերաժշտությունը մշակողի (դաշնամուրի համար) նախախորհրդային և խորհրդային շրջաններում:

1. Հայկական պարեր
2. Հեյդարի
3. Արևելյան և փարսական պոեմներ:
4. Շահնազ (ջութակի համար)

2. Սարգիս Բարխուդարյան.—Բնորոշել վորպես ինքնուրույն գեղարվեստական գործիքային (դաշնամուրային) յերաժշտություն մշակողի:

1. Արևելյան պարեր
2. Ակվարել
3. Նազ պար

## ԻՆՍՏՐՈՒՄԵՆՏԱԼ ՅԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ (ԱՆՍԱՄԲԼԱՅԻՆ) ՅԵՎ ՆՅՈՒԹԵՐ

1. Ալ. Սպենդիարյան.— Տալ կենսագրությունը և բնորոշել նրան վորպես ինստրումենտալ (սիմֆոնիկ) յերաժշտության հիմնադրի:



1. Տղաների և աղջիկների պարը («Ալմաստ» օպերայից)
2. Յերևանի եսյուդներ
3. Ղրիմի եսկիզներ

2. Ան. Տեր-Ղևոնդյան.—Բնորոշել նրան վորպես հայկական ինքնուրույն գեղարվեստական ինստրումենտալ յերաժշտության զարգացման առաջին շրջանի ներկայացուցչի:

1. «Խնոցին»
2. Կաքավի պես ման կուգաս (օրկեստրով)
3. Արտերը ծլել են

3. Արմեն Տիգրանյան.—Վորպես ժողովրդական վոճով «Անուշ» օպերայի ստեղծագործող և դպրոցական գործիչ:

1. Համբարձում յայլա («Անուշ» օպերայից)
2. Ամպի տակից («Անուշ» օպերայից)

4. Հարո Ստեփանյան.—Բնորոշել նրան վորպես հայկական ինքնուրույն գեղարվեստական յերաժշտության և օպերային գրականության խորհրդային ներկայացուցչի:

1. «Քաջ Նազար» օպերայից հատվածներ
2. Շեկ աղա

## ՅԵՐԳԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1. Շողեր ջան — ժողովրդական
2. Մանուկն ու ջուրը—Ռ. Մելիքյանի
3. Համբարձում յայլա—Արմ. Տիգրանյանի
4. Ամպի տակին—Արմ. Տիգրանյանի
5. Գացինք արտեր բռնի լոր—ժողովրդական
6. Ծառիս տակը կանաչ ե—Դ. Ղազարյանի
7. Կարոտ — Սպ. Մելիքյանի
8. Գնա՛, գնա՛ — ժողովրդական, մշակումը Կոմիտասի
9. Քաղհան — ժողովրդական, Կոմիտասի
10. Հովն անուշ — մշակում Դ. Ղազարյանի
11. Թող գրնգա — Մ. Միրզոյանի
12. Արի՛ դու, գարուն—Մ. Միրզոյանի
13. Շախտյորական — Դ. Ղազարյանի
14. Շողերն ելան — Աշոտ Սանուկյանի

ՀԱՅԿ-ՍՍՌ ... им. А. Мясникяна ... Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

## ՑԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՑԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

### Ձայնային (վոկալ) աշխատանք

ա) Աշխատանք շնչառության վրա. բ) Աշխատանք ձայնի վրա. գ) Աշխատանք տեքստի վրա (դիկցիա)։ Այս ունակությունների ամրապնդումն ավելի բարդ յերգերի վրա։

## ՑԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### ԲԱՐՁՐՈՒԹՅՈՒՆ ՑԵՎ ԼԱԴ

Անցած (սովորած) ինտերվալների ամրապնդում (յելևէջի կարգով)։ Ծանոթանալ ինտերվալների անուններին. լսողությամբ կարողանալ տարբերել տոնը կես տոնից։

Մաժոր և մինոր լադերի հասկացողությունը։ Տոնիկայի ճիշտ ըմբռնումը (զգալը)։ Տոնիկական յեռահնչյուն։ Ալտերացիայի նշաններ—պատահական և բանալիի մոտ (դիեզ, բեմոլ, բեկար) և նրանց նշանակությունն ու գրության ձևը։

### ՄԵՏՐՌՒԻԹՄ

Ղեկավարում նախատակտով։ Գաղափար խառն չափի մասին։ Կարողանալ գրել վոչ բարդ մելոդիկ թելադրություն դո-մաժոր տոնով, սեկստայի սահմաններում, վոչ բարդ ռիթմիկ նկարով։

## ՑԵՐԳԵՑԻԿ ԽՈՒՄԲ

### Ցերգեցիկ խմբի անցնելիք նյութերը

1. Ինտերնացիոնալ
2. Անվախ ընկեր
3. Պարտիզանական
4. Ուրախ տղաներ (միաձայն ակոմպ.)
5. Լորիկ (քառաձայն կամ յերկձայն)—Անտոն Մայիլյանի
6. Որոր (կանոն)
7. Ծաղկունքով շող մայիս (յերկձայն)—Դ. Ղազարյանի
8. Ջա՛ն, Կարմիր մայիս
9. Թող գնգա—Միք. Միրզոյանի
10. Հովն անուշ (քառաձայն)—Դ. Ղազարյանի
11. Ծառիս տակը կանաչ է (քառաձայն)—Դ. Ղազարյանի
12. Դե չուտ մեր շարքերը (յերկձայն)



13. Բարեկաղ յելեք (յերկձայն)
14. Շախտյորական (քառաձայն)—Դ. Ղազարյանի
15. Վարդը (միաձայն)—Ռ. Մելիքյանի
16. Կաքավիկ (միաձայն. ակոմպոնեմենտով)— Կոմիտասի
17. Քաղհան (յերկձայն)—Կոմիտասի
18. Գնա՛, գնա՛ (յերկձայն)—Կոմիտասի
19. Լեպո (քառաձայն)—Կարա-Մուրզայի
20. Համբարձում յայլա (քառաձայն՝ «Անուշ» օպերայից)—
Արմ. Տիգրանյան
21. Ջարկ թմբուկ—Մ. Մազմանյանի
22. Ծիտիկի որորը—Ա. Մանուկյանի
23. Ցերկիր իմ վառ.—Ա. Մանուկյանի
24. Հնչեն գիլ փողերը—Ա. Մանուկյանի
25. Դինամո յերգ—Ա. Մանուկյանի

### Ուսման տարեվերջի պահանջներ

1. Կարողանալ վորոշել տարվա ընթացքում սովորածներից առնվազն 10 հեղինակի և յերաժշտական գրվածքի անուններ։

2. Ունենալ տեղեկություն Գլինկայի, Չայկովսկու և «Հզոր խմբակի» մասին։

3. Իմանալ ուս. տարվա ընթացքում անցած յերաժշտագետների ստեղծագործությունների հիմնական գծերը։

4. Ճանաչել ստեղծագործությունը, ուսուցչի կողմից նրա մի կտորը նվագելիս։

5. Իմանալ գլխավոր սիմֆոնիկ նվագախմբերի անունները։

6. Կարողանալ բացատրել՝ ի՞նչ է օպերան։

7. Կարողանալ անհատապես յերգել 5 յերգ (առանց գործիքի օգնության) և խմբով՝ դասարանում սովորած բոլոր յերգերը—մաքուր առոգանությամբ (ինտոնացիայով), հատկապես լադային շեղումների տեղում—պարզ կերպով կատարելով ռիթմը, պարզ դիկցիայով, կանոնավոր գործադրելով շնչառությունը տարբեր դինամիկ գունավորման ժամանակ։

8. Կարողանալ գրել վոչ մեծ ու բարդ մելոդիկ թելադրություն դո-մաժոր տոնով օկտավի սահմանում, վոչ բարդ ռիթմիկ պատկերով։

9. Ցերգեցիկ խումբն անցած նյութերից կարողանա գեղարվեստորեն կատարել 6 յերգ։

---

582

ԳԻՆԸ 40 Կ.

Программы средней школы
ПЕНИЕ И МУЗЫКА
V--VI КЛАССЫ
Гиз ССР Армении, Эривань, 936 1г.

ՀՀ Ազգային գրադարան
NL0304262